Սիրելի կանայք,

Սրտանց շնորհավորում եմ ապրիլի 7-ի՝ մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ: Մեր ազգային տոնացույցի մեջ այս օրը նշվում է նաև սբ. Աստվածածնի Ավետման տոնը՝ որպես մայրերի և մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության օր:

Հայ ժողովուրդը ավանդաբար մայրության նկատմամբ ունեցել է պաշտամունքի հասնող վերաբերմունք: Եվ պատահական չէ, որ մենք Հայրենիքը կոչում ենք Մայր Հայաստան, մեր եկեղեցին կոչում ենք Մայր եկեղեցի, լեզուն՝ մայրենի, և իսկ երկրի կենտրոնական քաղաքը՝ մայրաքաղաք:

Մեր երեխաները իրենց հանգիստ ու ապահով են զգում իրենց մայրիկների գրկում, քաղաքացիներն էլ՝ իրենց Մայր հայրենիքում:

Մայրեր, քույրեր և կանայք այս գարնային զարթոնքի օրը, մաղթում եմ անսահման երջանկություն, հավերժ գեղեցկություն և անմար ժպիտներ: Թող Սուրբ Մարիամ Աստվածածնի Ավետման տոնը բերի խաղաղություն մեր ընտանիքներին ու երկրին, միասնությունն մեր ժողովրդի աշխարհասփյուռ հայրենակիցներին: